Ո Ր Ո Շ Ում
Կատարողական վարույթը կասեցնելու մասին

13.06.2022թ. ք.Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ, Դավթաշեն և Արաբկիր վարչական շրջանների բաժնի հարկադիր կատարող՝ արդարադատության մայոր Արման Կոնջորյանս, ուսումնասիրելով թիվ 05552928 կատարողական վարույթի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 04.11.2019թ. տրված թիվ ԵԴ/0833/02/19 կատարողական թերթի համաձայն պետք է Ռուզաննա Ռզգոյանից հօգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 1.644.188 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:Պարտապանի գույքը բավարար չէ կատարողական թերթի պահանջը կատարելու համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով և 37-րդ հոդվածի 8-րդ կետով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել թիվ 05552928 կատարողական վարույթը 90-օրյա ժամկետով:

Առաջարկել պահանջատերերին և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան:

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում:

Որոշման պատճենն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել դատական կամ վերադասության կարգով՝ որոշումը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5–րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ՝
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՈՐ Ա.ԿՈՆՋՈՐՅԱՆ

Digitally signed by KONJORYAN ARMAN
1702840476
Date: 2022.06.13 15:36:40 AMT